Արձանագրություն N 4
«ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2015/5» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «13» հունվարի 2016թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ք. Քաբաբյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Գասպարյանը և Լ. Զաքարյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մովսեսյանը

Ի. Բաց ընթացակարգի հայտերի բացման մասին
(Ք. Քաբաբյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1.	«Նոր-Էներջի» ՍՊԸ և «ՎԵԿ ստրոյ» ՍՊԸ կոնսորցիում	-	ՀՀ, ք. Երևան, Առաքելյան փ. 25/5, էլ. փոստ. nor-energy@mail.ru
2.	«Ն.Ռ.Վ.Ա.Դ.» ՍՊԸ	-	ՀՀ ք. Գորիս, Օրբելյանների 7/14, էլ. փոստ. nrvad@yahoo.com
3.	«Մերձմոսկովյան» ԲԲԸ - «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ - «ԲԼԵՍԿ» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ - «Արդիմպեքս» ՍՊԸ կոնսորցիում	-	ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն, էլ. փոստ. undermoscow89@mail.ru, ՀՀ Արարատի մարզ, գ. Ուստան, էլ. փոստ. s.arist@mail.ru, ՀՀ, ք. Երևան, Արցախի 40, էլ. փոստ. blesk.yerevan@gmail.com, ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի 49, էլ. փոստ. ardimpex@rambler.ru
4.	«Ախուրյանի Կոոպշին» ՍՊԸ	-	ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Թբիլիսյան խճ. 1, էլ. փոստ. harutpoghosyan@mail.ru
5.	«ԳՈՌՏԻԳ» ՍՊԸ	-	ՀՀ, ք. Երևան, Շիրակի 94ա, էլ. փոստ. gortig@mail.ru

բ/ մասնակիցների կողմից առաջարկված գները պայմանագրի կատարման համար ընդհանուր գումարով հետևյալն են.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ		
		Գինն առանց ԱԱՀ-ի	ԱԱՀ	Ընդհանուր
Չափաբաժին 1				
1	«ԳՈՌՏԻԳ» ՍՊԸ	421708700	84341740	506050440
2	«Ախուրյանի Կոոպշին» ՍՊԸ	441711600	88342320	530053920
3	«Ն.Ռ.Վ.Ա.Դ.» ՍՊԸ	443466784,2	88693356,8	532160141
4	«Նոր-Էներջի» ՍՊԸ և «ՎԵԿ ստրոյ» ՍՊԸ կոնսորցիում	462000000	92400000	554400000
5	«Մերձմոսկովյան» ԲԲԸ - «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ - «ԲԼԵՍԿ» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ - «Արդիմպեքս» ՍՊԸ կոնսորցիում	468104760	93620952	561725712
Չափաբաժին 2				
1	«ԳՈՌՏԻԳ» ՍՊԸ	341919505	68383901	410303406
2	«Նոր-Էներջի» ՍՊԸ և «ՎԵԿ ստրոյ» ՍՊԸ կոնսորցիում	344032500	68806500	412839000
3	«Մերձմոսկովյան» ԲԲԸ - «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ - «ԲԼԵՍԿ» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ - «Արդիմպեքս» ՍՊԸ կոնսորցիում	348424560	69684912	418109472
Չափաբաժին 3				
1	«ԳՈՌՏԻԳ» ՍՊԸ	410597695	82119539	492717234

2	«Նոր-Էներջի» ՍՊԸ և «ՎԵԿ ստրոյ» ՍՊԸ կոնսորցիում	414225000	82845000	497070000
3	«Մերձմոսկովյան» ԲԲԸ - «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ - «ԲԼԵՍԿ» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ - «Արդիմպեքս» ՍՊԸ կոնսորցիում	418377870	83675574	502053444
Չափաբաժին 4				
1	«Նոր-Էներջի» ՍՊԸ և «ՎԵԿ ստրոյ» ՍՊԸ կոնսորցիում	186900000	37380000	224280000
2	«Մերձմոսկովյան» ԲԲԸ - «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ - «ԲԼԵՍԿ» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ - «Արդիմպեքս» ՍՊԸ կոնսորցիում	188819880	37763976	226583856

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին.

ա) համապատասխանում է «Մերձմոսկովյան» ԲԲԸ - «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ - «ԲԼԵՍԿ» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ - «Արդիմպեքս» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը,

բ) չեն համապատասխանում՝ «Նոր-Էներջի» ՍՊԸ և «ՎԵԿ ստրոյ» ՍՊԸ կոնսորցիումի, «Ն.Ռ.Վ.Ա.Դ.» ՍՊԸ-ի, «Ախուրյանի Կոոպշին» ՍՊԸ-ի և «ԳՈՌՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը, հետևյալ հիմնավորմամբ.

- «Նոր-Էներջի» ՍՊԸ և «ՎԵԿ ստրոյ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտի գնային առաջարկում՝ N 4 հավելվածում, նշված է, որ «Նոր-Էներջի» ՍՊԸ և «Էկոլակտ» ՍՊԸ կոնսորցիումն առաջարկում է պայմանագիրը կատարել գնային առաջարկում նշված գներով, որը չի հանդիսանում սույն ընթացակարգի մասնակից,

- «Ն.Ռ.Վ.Ա.Դ.» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի տուժանքի մասին համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագրում լրացված չի «Շահառուի բանկը» և հաշվեհամարը՝ «հշ. N»,

- «Ախուրյանի Կոոպշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի տուժանքի մասին համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագրում նշված շահառուի հաշվեհամարը սխալ է,

- «ԳՈՌՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի տուժանքի մասին համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագրում նշվել է ներկայացման ամսաթիվ՝ 2015 թվական, այնինչ համաձայն վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի ներկայացման ամսաթիվը պարտադիր լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը,

գ) միաժամանակ հայտնում ենք, որ.

- «Նոր-Էներջի» ՍՊԸ և «ՎԵԿ ստրոյ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից www.armeps.am էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ներկայացված հայտում ներառված չեն N

3.1 և N 3.3 կամ N 3.4 հավելվածները, համապատասխանաբար՝ մասնագիտական փորձառության և ֆինանսական միջոցների մասին հայտարարությունները, ինչպես նաև համատեղ գործունեության պայմանագիրը, քանի որ մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով),

- «ԳՈՌՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ ներկայացվել է, որ նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերի՝ քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման լիցենզիայի շրջանակներում՝ չափաբաժին 1-ի համար՝ հիդրոտեխնիկական, չափաբաժին 2-ի և 3-ի համար՝ էներգետիկ ոլորտներով կատարված աշխատանքների հանրագումարային ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս է սույն գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, ինչպես նաև հայտում ներառված չի չափաբաժին 2-ի և 3-ի համար պահանջվող լիցենզիան՝ «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» լիցենզիան՝ էներգետիկ ոլորտի:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

- մերժել՝ «Նոր-Էներջի» ՍՊԸ և «ՎԵԿ ստրոյ» ՍՊԸ կոնսորցիումի, «Ն.Ռ.Վ.Ա.Դ.» ՍՊԸ-ի, «Ախուրյանի Կոոպշին» ՍՊԸ-ի և «ԳՈՌՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը, քանի որ չեն համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին,

- ներկայացված գնային առաջարկների հիման վրա սույն ընթացակարգի I, II, III և IV չափաբաժինների համար առաջին տեղ զբաղեցնող ճանաչել՝ «Մերձմոսկովյան» ԲԲԸ - «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ - «ԲԼԵՍԿ» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ - «Արդիմպեքս» ՍՊԸ կոնսորցիումին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

4. Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

5. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

- առաջարկել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,

- փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ

աշխատանքային օրվա ժամը 15:00-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն 3-րդ հարկ, N 307 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ք. Քաբաբյան

Անդամներ՝ _____ Կ. Գասպարյան

_____ Լ. Զաքարյան

Քարտուղար՝ _____ Ա. Մովսեսյան